ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 68

«14» 07 2020 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի N 99 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Հրանտի Հարությունյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի պաշտոնակատարի 10.07.2020թ. N 224-Ա և Արմեն Ալբերտի Աֆանդյանին նույն պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 13.07.2020թ. N 226-Ա հրամանները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի նոյեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում արձակուրդի և գործուղման հրամանների, ինչպես նաև ծառայողական վկայականների ստորագրման լիազորությունների նոր բաշխում կատարելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի հուլիսի 4-ի N 53, N 54, N 55 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 99 հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետում «**Ա.Հարությունյանը**» բառերը փոխարինել «**Ա.Աֆանդյանը**» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և այլ դատախազներին, Հայաստանի

և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ